ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4

ք. Հրազդան 15.03.2019թ. ժամը 11[30]

ՀՀ Կոտայքի մարզպետարանի կարիքների համար <<ԿՈՏ-ԳՀԱՊՁԲ-19/9>> ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Հանձնաժողովի նախագահ՝

Ալեքսան Եղիշյան-Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ

Անդամներ՝

Համլետ Ստեփանյան-Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի առաջատար մասնագետ,

Վարդան Քալանթարյան-Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ,

Կարեն Հովհաննիսյան-Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնի առաջատար մասնագետ

Հանձնաժողովի քարտուղար՝

Հասմիկ Հակոբյան-Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատում

1.1 <<ԿՈՏ-ԳՀԱՊՁԲ-19/9>> ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.03.2019թ. թիվ 3 որոշմամբ 1-2 չափաբաժիններում ԱՁ Ոսկան Պետրոսյանը հայտարարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից: Վերջինիս 11.03.2019թ. համակարգի միջոցով ուղարկվել է ծանուցում՝ առաջարկով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

2. Սահմանված ժամկետի ավարտից հետո մասնակիցը չի ներկայացրել հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց.

2.1 Մերժել ԱՁ Ոսկան Պետրոսյանի հայտը:

2.2 <<Ինո Թեքնոլոջի>> ՍՊԸ-ին /չափաբաժին 1/ և <<Կոմպմարկետ>> ՍՊԸ-ին /չափաբաժին 2/ հայտարարել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ:

2.3 Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

2.4 համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին ուղարկել ծանուցում՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը, ժամը.

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 2.3 և 2.4 կետերով պահանջվող տեղեկատվությունը ստանալուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահող՝ ---------- ***Ա.Եղիշյան***

անդամներ՝

---------- ***Վ.Քալանթարյան***

---------- ***Հ.Ստեփանյան***

---------- ***Կ.Հովհաննիսյան***

քարտուղար՝ ---------- ***Հ.Հակոբյան***